1905

№ 237 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1 № 237

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Մարթա, Գերասիմ, Աննա Տէր-Գրիգորեանց, Եղիսաբէթ Մարգարեանց, Կատարինէ Աւետիսեանց և Թեկլէ Հալաբեանց ցաւօք սրտի յայտնում են բարեկամներին և ծանօթներին, առաջինը իր որդու և վերջինները իրանց եղօր

ՄԻՍԱԿ ԱՒԵՏԻՔԵԱՆ ԳԱՍՊԱՐԵԱՆՑԻ

մահը, որի յուղարկաւորութիւնը լինելու է հինգշաբթի, դեկտեմբերի 1-ին, առաւօտեան ժամը 10-ին, Մնացական տնից—Հալաբար, Լազարեան փողոց № 15 ս. Մինաս եկեղեցին։

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խնդիրը խոշոր է. Վերջին տեղեկութիւններ. Ականատեսների պատմածները. Տեղեկութիւններ գաւառից.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսի վերջին դէպքերը. Բագուի օֆիցէրների որոշումը. Դաշնակցութեան ծանուցումը. Նոյեմբերի 29-ը Թիֆլիսում. Ապստամբական շարժումներ. Բաց նամակ խաղաղարար սօցիալ-դեմօկրատներին. Ներքին լուրեր։

ԽՆԴԻՐԸ ԽՈՇՈՐ Է

Թիֆլիսի և Գանձակի նահանգների աղէտալի դէպքերը դերիշխում են մտքերի վրա և ուրիշ խնդիրներ յետ են մղվել ասպարէզից ժամանակաւոր կերպով։

Հայ և Թուրքական ընդհարումների աղէտալի դէպքերը, եթէ առաջ էլ շատ լուրջ էին իրանց էութեամբ և առեղծած հետևանքներով, այժմ հանդէս են գալիս, իբրև մեր երկրի ամենախոշոր և չափազանց բազադրեալ երևոյթներից մէկը, որը վերաբերում է ոչ թէ մի որոշ շրջանի, այլ հայաբնակ բոլոր տեղերի, նոյն իսկ ամբողջ երկրի և գուցէ Առաջաւոր Ասիայի մի ընդարձակ մասի ազգաբնակութեան բարօրութեան խնդրին։

Երբ որ Բագւում փետրվար ամսին տեղի ունեցաւ անսպասելի կերպով կոտորած, մենք հայերս տրամադիր էինք նայելու նրա վրա, իբրև մի բացառութեան, իբրև մի պատահական դժբաղդութեան վրա։ Նախիջևանի և Երևանի դէպքերը ցոյց տուեին, որ Բագւում պատրաստուած Թոյնը վարակել է մահմեդականների ընդարձակ շրջաններ։ Բայց դարձեալ մենք հայերս տրամադիր էինք կարծել, որ այդ ընդհարումներով ամեն բան կը վերջանայ։

Այնուհետև Զանգեզուրի, Շուշու, Ջիվանշիրի գաւառի դէպքերը ցոյց տուեին, որ սկսվել է մի անզուսպ շարժում, որ տարերային և ճակատագրական բնաւորութիւն է ստացել։

Ինչն է եղել այդ շարժման սկզբնապատճառը, ինչ հիւթերով է նա սնվել և աճել, ինչ նպատակներով է նա այսօր առաջ տարվում—դրանք հետաքրքրական և կարևոր խնդիրներ են, որոնց ուսումնասիրութեամբ պէտք է զբաղվել։ Բայց ներկայի համար յամենայն դէպս մի բան պարզ է, որ Թուրք-հայկական խռովութիւնը իրական դժբաղդ մի երևոյթ է։ Նա դուրս է եկել իր բացառական, պատահական, դիպուածական դրութիւնից և դարձել է մի լուրջ ցաւ։

Մեր Թուրք հարևանները չափազանց վտանգաւոր խաղով էին զբաղված և չափազանց հլու կերպով անձնատուր եղան դաւադրական ծրագիրների։ Մենք հայերս փորձեցինք ամեն կերպ կղզիացնելու եղած յուզմունքները և բռնկումները, մենք թէ հասարակական ժողովներում և թէ մամուլի էջերում ամեն միջոց գործ դրինք համերաշխութեան գաղափարի շուրջը հաշտեցնելու յուզված կրքերը. բայց ի զուր, բոլորովին իզուր անցան մեր ջանքերը։

Մենք անկասկած այժմ էլ մեծ բաղձանք կը զգայինք, եթէ մեր Թուրք հարևանները վերջնականապէս և կարական կերպով որոշէին յետ կանգնել իրանց սկսած գործից և մեզ հետ միացած անձնատուր լինէին կուլտուրական գործունէութեան։ Բայց մենք կորցրել ենք վստահութիւն դէպի մեր հարևանները և նրան կարող ենք վերականգնել, եթէ մեր հարևանները հաստատ ապացոյցներ կը տան, որ նրանք յիրաւի վճռել են ձեռք վերցնել յարձակումներից աւազակութիւններից, հրդեհումներից և կողոպուտներից։

Շատ դժուարացել է հարցի լուծումը, որովհետև այն, ինչից մենք այնքան երկիւղ էինք կրում, դարձել է իրականութիւն։ Մենք խուսափում էինք ազգատեացական շարժումներից, մենք զգուշանում էինք ազգայնական թշնամութիւնից. իսկ վերջի վերջոյ մենք կանգնած ենք դժբախտութեան առաջ։ Մեր երկրի մի անկիւնում մի Թուրքի, կամ մի հայի սպանութիւնը դառնում է ազդանշան, որ հայերը և Թուրքերը առհասարակ խէթ աչքով նայեն միմեանց վրա, մեր երկրի ամբողջ տարածութեան վրա։

Հայերի հետ միասին ապրում են մեր երկրում և ուրիշ ազգեր, որոնք եթէ այսօր լոկ հանդիսատեսներ են, վաղը ստիպված կը լինեն աւելի ներգործական դեր ստանձնել, որովհետև երկրի մէջ տեղի ունեցող ամեն մի խոշոր երևոյթ կը շօշափէ և նրանց շահերը և վերջապէս ոչ ոք չէ կարող մարսել ազգերի թշնամութիւն և միմեանց ոչնչացնելու գործողութիւնները երկար ժամանակի ընթացքում։

Չը պէտք է մոռանալ և այն, որ կան վարակիչ ախտեր և աղէտներ, որոնք կարող են նոր ասպարէզներ գրաւել, նոր ճիւղաւորութիւններ արձակել և նոր կնճիռներ առաջ բերել։ Հայ-Թուրքական յարաբերութիւնները այժմ էլ արդէն շատ դժուար կացութեան մէջ են դրել վրացիներին, քիւրդերին, դաղստանցիներին և միւս ազգերին։ Ամենքը երկիւղի մէջ են, որ մի գուցէ հայ-Թուրքական ընդհարումների պատճառով ծագեն նոր ազգայնական համախմբումներ և առաջ բերեն նոր ընդհարումներ։

Այդ հարցի մասին մենք կը խօսենք։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք հաղորդեցինք, որ Թիֆլիսի վեցերորդ քաղաքամասում բռնկվել էին հրդեհներ և որ հրդեհաշէջները սկսել էին հանգցնել կրակը։ Սակայն Թուրքերի մասում հրացանաձգութիւնը չէ դադարում, ուստի հրդեհաշէջների խումբը յետ դարձաւ և Թողեց հրդեհված տունը բաղդի կամքին։

Ժամի 3-ի մօտերքը կրակ երևաց և մի շարք խանութներում։ Սարսափ տիրեց շրջակայ ազգաբնակութեանը, որովհետև կրակը կարող էր մեծ ծաւալ ստանալ և ճարակել ամբողջ Թաղեր։ Ժողովուրդը յուզվում էր, մարդիկ էր ուղարկում դէպի քաղաքային ուպրավա և ոստիկանապետի մօտ, բայց օգնութեան եկող չը կար։

Վերջապէս ժամի 8-ի մօտերքը կարելի եղաւ նորից ստիպել հրդեհաշէջներին, որ գնան այրվող շրջանը և հանգցնեն կրակը։ Ժամի 10-ի մօտերքը հնարաւոր եղաւ կղզիացնել կրակը և պաշտպանել շրջակաները կրակից։ Այրվել են վեց տուն։

Միւս կողմից շատ մեծ յուզմունք և գայրոյթ էր առաջացրել այն հանգամանքը, որ զինուորները և մասամբ կօզակները յարձակվել էին Խարփուխի մասում գտնվող հայ ինքնապաշտպանների վրա և նրանց զինաթափ արել։ Նոյնը նրանք մտադիր են եղել և Շէյթան-Բազարի շրջանում. բայց այնտեղ գործող ինքնապաշտպաններից մի քանիսը շտապեցին քաղաքային ուպրավա և այնտեղ գտնվող ձայնաւորներին ու ուրիշ անձերին զեկուցանելով եղածի մասին, բացատրեցին դրութեան չափազանց վտանգաւորութիւնը և տեղեկացրին, որ եթէ զինաթափ անելը շարունակվի, կարող է շատ մեծ դժբախտութիւն առաջ գալ, որովհետև ինքնապաշտպանները կընդդիմանան զէնքը յանձնելու և տեղի կունենայ ընդհարում։ Իսկ ինքնապաշտպանները չէին վստահանայ զէնք յանձնել, որովհետև նրանք ապահով չէին, որ Թուրքերի կողմից դադարեցրած են յարձակողական գործողութիւնները։

Իսկոյն կազմվեց մի պատգամաւորութիւն Փոխարքայի օգնական գեներալ Մալամայի մօտ։ Պատգամաւորութեան մասնակցում էին քաղաքի ձայնաւորներ և «Մշակի» խմբագիր Ա. Քալանթար։ Գեներալ Մալաման, տեղեկանալով հանգամանքների հետ, իսկոյն պատուէր ուղարկեց Շէյթան-Բազար գնդապետ Գավրիլովին ոչ մի խուզարկութիւն չանել և ոչ ոքի զինաթափ չանել։

Պատգամաւորութիւնը վերադառնալով քաղաքային տուն, զեկուցեց այնտեղ ժողոված բազմութեանը արած կարգադրութեան մասին։

Շուտով եկան նոր տեղեկութիւններ Շէյթան-Բազարի կողմից։ Պարզվեց, որ զինաթափ եղած և անզէն եղած մարդկանց մի խումբ կղզիացած մնացել է ս. Սարգսի շրջանում, որ Թուրքերի կողմից չէ նկատվում զինադադար, որ պատնէշներ կամ բարրիկադներ վերցնելը նպատակայարմար չէ, որովհետև եթէ Թուրքերի կողմից առաջխաղացութիւն լինի, կարելի կը լինէր իսկոյն կազմակերպել դիմադրութիւն։

Պատգամաւորութիւնը նորից գնաց գեներալ Մալամայի մօտ։ Երկար և մանրամասն բացատրութիւններից յետոյ գեներալ Մալաման յայտնեց հետևեալը.

1) Նորից մարդ կուղարկվի արգելելու զինաթափութիւնը։

2) Պատուէր կը տրվի, որ անպաշտպան մնացած հայերի մի խմբի համար նշանակվի զօրքի մի մասը։

3) Թոյլ տալ, որ բարրիկադները մնան իրանց տեղերում դարձեալ մի քանի օր։

4) Թոյլ տալ, որ տների մէջ ինքնապաշտպանները մնան և հսկեն։

Պատգամաւորութիւնը վերադարձաւ քաղաքային տուն, զեկուցանելու այդ բոլորի մասին։

Շուլաւէրից հեռագրում են նոյեմբ. 29-ի երեկոյեան 4 ժ. 20 ր.

«Երէկ աջողվեց ժամանակաւորապէս դադարեցնել Թուրքերի թշնամական գործողութիւնները։ Սուր բնաւորութիւնն անցաւ։ Հանգստութիւնն ամբողջապէս կախված է նրանից, որ Թոյլ չը տրվի Թիֆլիսում սպանել անպատիժ կերպով նոյն իսկ այս ու այս Թուրքին։ Հրդեհներով և կողոպուտներով հայերին պատճառել են մինչև $2^1/_2$ միլիօն րուբլու վնաս։ Ձեռք են առնված վճռական միջոցներ կողոպտված իրերը յետ դարձնելու»։

Գաւառապետ կապիտան Բէգանով

Կարսի երկաթուղով Թիֆլիս եկած Դաւիթ Արամեանց, մտնելով մեր խմբագրատունը, պատմեց մեզ հետևեալը.

«Նոյեմբերի 25-ին, ուրբաթ օր, ես Թիֆլիսից ուղևորվեցի դէպի Աշաղա-Սարալ կայարանը Արամեանցի կալուածքը գնալու և այնտեղ եղած աշխատողներին պատսպարելու նպատակով։ Կայարանում ինձ պէտք է սպասէր կառք՝ կալուածք տանելու համար։

Հազիւ Թիֆլիսից հեռացանք, Սօղանլուխ կայարանում Թուրքերը յարձակվեցին մեր գնացքի վրա և մի հայի կարատեցին։ Սանդար կայարանում Թուրքերը կողոպտեցին մի քանի հայերի։ Ճանապարհին պատմում էին սարսափելի լուրեր։

Երբ հասանք Աշաղա-Սարալ կայարանը, կալուածքը կրակի մէջ էր և ճանապարհը փակված էր Թուրքական հրոսակներով։ Անկարելի էր կալուածք գնալը։ Ես վճռեցի գնալ դէպի Սանահին։ Երբ որ Կարսի երկաթուղին եկաւ ես տեղափոխվեցի այդ գնացքի վրա Թիֆլիս վերադառնալու նպատակով։

Ճանապարհորդները, տեղեկանալով գծի անապահովութեան մասին, խնդիրներ Անժէյչնկօվի միջոցով հեռագրեցին Թիֆլիս, որ ուղարկվի երկաթուղով պահակախումբ զօրք՝ գնացողներին պաշտպանելու նպատակով։ Երկաթուղին 7 ժամ սպասելուց յետոյ, առաւօտեան ժամի 6-ին, ճանապարհ ընկաւ։ Գնացքի մէջ էր և եղբօրս կինը։

Երբ հասանք Սադախլու կայարանը, սկզբում ոչ մի օտարոտի բան չը նկատեցինք. բայց մի քանի րօպէից յետոյ յանկարծ երևաց Թուրքերի մեծ բազմութիւն, որը վայր բերեց մեքենայապետին և սկսեց յարձակվել վագոնների վրա։ Որքան մենք խնդրեցինք օբեր-կոնդուկտոր Սօֆրօնեանին փակել դռները, նա չը համաձայնվեց, առարկելով, որ նա իրաւունք չունի։

Թուրքերը յարձակվեցին մեզ վրա տարան բոլոր գոյքը, եղբօրս կնոջից խլեցին քարեղէնները՝ 3500 րուբլի արժողութեամբ, վերցրին իմ ժամացոյցը, փողը և պայուսակս։ Ես դիմադրեցի, որքան կարող էի, բայց ստանալով երեք վէրք՝ գլխիս, կրծքիս և ձեռքիս, ուժաթափ եղայ։ Մենք երկուսս կորցրինք 4500 րուբլի արժէք։

Երբ Թուրքերը վերջացրին ամեն բան և կողոպտեցին բոլորիս, միայն այդ ժամանակ նրանց գիւղապետը, որը մինչև այդ լուռ հանդիսատես էր եղելութեանը, մէջ մտաւ գործին, սկսեց բարկանալ, աղաղակել և ծեծել Թուրքերին, ցանկանալով ցոյց տալ մեզ որ ինքը սաստիկ դժգոհ է եղածից, բայց ոչինչ չը խլեց նրանցից և մեզ չը վերադարձրեց։

Վերջացաւ ողբերգական և խայտառակ կատակերգութիւնը։ Թուրքերը հեռացան և մեր գնացքը նորից շարժվեց դէպի առաջ։

Յետոյ պարզվեց, որ չը նայելով մեր խնդիրքին, ոչ մի պահակախումբ չէր ուղարկված մեր գնացքի համար։

Թէ ինչ է եղել Արամեանցի կալուածքում գտնվող քիմիկից աւելի ծառայող հայերի հետ, մինչև այժմ (նոյեմբերի 30-ը) ոչ մի տեղեկութիւն չունենք։ Դիմել ենք նահանգապետին և ուրիշ անձերի՝ բայց ոչ մի տեղեկութիւն չեն կարողանում տալ մեզ։

Ղազախից Թիֆլիս եկած կարճևանցի Առաքել Առաքելեան, մտնելով մեր խմբագրատունը, պատմեց մեզ հետևեալը.

Նոյեմբերի 28-ին, երկուշաբթի օր, առաւօտեան, ես իմ ամուսնու, եղբօրս կնոջ և զաւակների հետ, ճանապարհ ընկանք դէպի Աղստաֆա։ Մինչև երկուշաբթի խառնակութիւն չը կար Ղազախում։ Կիրակի օր Թուրքերը մի քանի հրացաններ արձակեցին, բայց գաւառապետը հանգստացրեց։ Սակայն մեզ համար պարզվեց, որ կեանքը դարձել է անապահով։

Ես ճանապարհ ընկայ երեք կառքով հաւատարիմ Թուրքերի ուղեկցութեամբ։ Մինչև Աղստաֆա կայարանը անվտանգ անցանք։ Կայարանին մի քանի սաժէն մնացած, Թուրքերը յանկարծ յարձակվեցին մեր ֆայտոնների վրա։ Չը նայելով, որ այնտեղ կանգնած էր ուրեադնիկը իր պահակախմբով, ոչ ոք չը կանգնեցրեց յարձակվողներին։ Ինձ ուղեկցող պահապան Թուրքերը ամեն կերպ աշխատեցին պատսպարել մեզ։ Ինձ օգնեց կայարանում գտնվող Ալի Մամադ Րահիմօվ։ Յարձակվողները կողոպտեցին մեզ և վիրաւորեցին հրացանով եղբօրս կնոջ ոտքը։

Մենք ազատվեցինք մի կերպ, բայց կորցրինք մեր բոլոր ունեցածը։ Ի միջի այլոց ինձանից վերցրել են կալուածների կուպչիներ, մօտ 3000 րուբլու կնիժկաներ, Ղազախի գանձարանի մուրհակներ, Թղթեր և շատ Թանգագին իրեր։ Տարած գոյքի արժողութիւնը կը լինի 2500 րուբլու չափ։ Մեր մխիթարութիւնը եղել է միայն այն, որ մենք ազատվել ենք մահից։

Գանձարանի կնիժկաները անուանական են Առաքելեանցի և իմ ազգակիցների անունով։ Այդ մասին յայտնվում է ի տեղեկութիւն ուրիշ անձերի։

Յարձակվողները և կողոպտողները յայտնի են իրանց շրջանում իբրև պատուաւոր մարդիկ և համարում են եղել իրանց իմ մօտ ծանօթները և «բարեկամները»։

Իշխանուհի Արղութեանի Լօճի (Թիֆլիսի գաւառում) կալուածքի կառավարիչներ՝ Գէորգ Սուքիասեան և Ալեքսի Տէր-Վարդանեան յայտնեցին հետևեալը.

«Աղթաքլի և Կարաջալի գիւղերի Թուրքերը՝ Թւով մօտ 200 հոգի, Թուրք աղալար Սօֆիեվի առաջնորդութեամբ նոյեմբերի 25-ին յարձակվում են Լօճի կալուածքի վրա և տանում 179 գլուխ ապրանք—եզ, գոմէշ, ձի, ոչխար և այլն, բոլորն էլ լաւ տեսակի։ Նոյեմբերի 26-ին էլ նոյն Թուրքերը մի և նոյն աղալարի առաջնորդութեամբ գալիս են կալուածքը և Թալանում շտեմարանում եղած հացահատիկը, գիւղատնտեսական իրերը, ծառայողների շորեղէնը և այլն։ Մեր մի ծառայողի պատմելով, Թուրքերը սպառնացել են, որ պիտի հրդեհեն կալուածքում եղած խոտի խուրձերը, խաղողի այգին և նոյն իսկ ամբողջ կալուածքի շինութիւնները։»

ԱԿԱՆԱՏԵՍՆԵՐԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ

Սօցիալիստ-յեղափոխական, նոյեմբերի 28-ին, ցերեկվայ $2^1/_2$ ժամին.

Թուրքերը Արբուզնայա հրապարակի վրա սպիտակ դրօշակ բարձրացրին և խնդրեցին Կարմիր Խաչի (սօցիալ-յեղափոխական) ներկայացուցիչների միջոցով, որ հայերը ժամանակաւորապէս դադարեցնեն հրացանաձգութիւնը, որովհետև նրանք կամենում են բարիկադ շինել։ Զինուորների հրամանատար օֆիցէրը արգելեց բարրիկադներ շինել և կրակ բացեց Թուրքերի վրա, որոնք ցրվեցին։

8-րդ դասատան գիմնազիստ Գավաեվ հաղորդեց հետևեալը. Երէկ, երեկոյեան 7 ժամին Տօրգօվայա հրապարակի վրա գտնվող դիրքից հրացանի գնդակով վիրաւորվեց գթութեան քոյրը։

Արշակ Տէր-Յովհաննիսեանը յայտնեց, որ Արտաշէս Տէրտէրօվ, Թամամշեվի Ջրաղացի կառավարիչը (Օրթաճալի), պատմել է իրան հետևեալը։ Նրան տեղեկացրին, որ 2000 զինված Թուրքեր են մօտենում. նա խնդրել է Թիֆլիսի գնդի հրամանատարից օգնութիւն։ Վերջինն ասել է, որ նախ զօրքը զբաղված է սօցիալ-դէմօկրատներին զէնք բաժանելու համար, երկրորդ—զօրքերի վրա յոյս դնել չէ կարելի, այնպէս որ նա միջոցներ չէ կարող ձեռք առնել։

Նոյեմբերի 28-ին ժամը 2-ին կէսօրից յետոյ, մի ռուս խուլիգան Բեբուտօվսկայա փողոցում ատրճանակ է արձակում և փախչում։ Հայ պայքը բռնում են և խուզարկում, բայց նրա վրա ոչինչ չեն գտնում։ Բանից դուրս է գալիս, որ խուլիգանը ատրճանակ արձակելով, Թողնում է փողոցում ատրճանակը, որ և գտնվեց փողոցում։ Խուլիգանը բանտարկված է։

Մի անձ պատմեց հետևեալը.

Մենք գալիս էինք Ալէքսանդրապօլից։ Ճանապարհին, չը նայած, որ մեզ հետ գնացքում կային և օխրանա և մի քանի օֆիցէրներ, այնուամենայնիւ Սադախլու կայարանում Թուրքերը ներս խուժեցին գնացքը, խուզարկեցին և Թալանեցին։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դաղեր-Խաչեն գիւղ, 27 նոյեմբերի։ «Նոյեմբերի 23-ին Թուրքերը Թափան կոչված տեղում սպանեցին մեր գիւղացի մի տղայի։ Սրանից յետոյ Եկատերինենֆելդ գերմանական գաղութի հայերը ամբողջովին տեղափոխվեցին մեզ մօտ։ Այդ միջոցում նոյն գաղութում սպանվեց մի շահնազարցի սայլապան և վիրաւորվեց մի արհեստաւոր։ Ամսիս 25-ին և 26-ին Թալանեցին և այրեցին Մանթաշեանի կալուածքը, որից յետոյ արշաւեցին Ռատևան, Կիանէթ, Գօրնչուկ, Ակաուրթ, Զալղամ գիւղերի վրա և աւերեցին ու այրեցին նրանց, որտեղ կան և մարդկային զոհեր։ Վերոյիշեալ գիւղերի բնակիչները ապաստանած են Սամղերէթ գիւղում։ Այս րօպէիս տեղեկութիւն եկաւ, որ Թուրքերը յարձակվել են Ցինար կոչված մեր գիւղացիների ձմերանոցների վրա և քշել տարել են բոլոր ոչխարն ու տաւարը, որտեղից փախել և հասել են գիւղը երկու մարդ, որոնցից մէկը վիրաւորված է Թևից, իսկ մնացածների, Թւով մօտ 20 հոգի, դրութիւնը անյայտ է։ Այսօր առաւօտ Մովսէսը (սուրհանդակ) մի տասնեակով գնաց Շամշուլդայի և Սամղերէթի կողմերը։ Ամսիս 24-ին յարձակում է եղել Դուրնուկի վրա, բայց մեր զինուորներից մի տասնեակ հաւարին հասաւ և առաջն առաւ. այժմ այնտեղ ռուս կառավարութիւնը 25 զինուոր է դրել պաշտպանելու համար։ Ընդհանրապէս դրութիւնը քանի գնում սուր կերպարանք է ստանում. ամեն րօպէ սպասում ենք յարձակման։ Խնդրում եմ շտապէք մեզ օգնութեան հասնել, մեզ հարկաւոր են հրացան և փամփուշտ։ Առաջարկեցէք այդտեղ բնակվող մեր գիւղացի տղաներին, գալ մեզ օգնելու իրանց զէնքերով։ Աչքի առաջ ունեցէք, որ եթէ մենք ունենայինք եղածից 50 զինուոր աւել, այն ժամանակ վերոյիշեալ դէպքերը տեղի չէին ունենայ։

Արխատակէս քահ. Յովսէփեանց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ

(Նոյեմբերի 28 և 29-ը)

Նոյեմբերի 28։ Ասացինք, որ գիշերն անցաւ անհանգիստ. լսվում էին անընդհատ, բայց սակաւ հարուածներ։

Մինչ այդ, երեկոյեան, դէպքերի Թարմ տպաւորութեան տակ, սօցիալ-դեմօկրատական ղեկավար մարմինը հաւաքվեց և կայացրեց հետևեալ որոշումը. որովհետև Թուրքերը յարձակվեցին մեզ, խաղաղարարներիս վրա և սպանեցին մէկին ու վիրաւորեցին 2-ին և այդպիսով իրանք բաց արին պատերազմական գործողութիւնները, այդ պատճառով մենք հեռացնում ենք մեր պատրոլները բուրժական մասից և այսուհետև ծագելիք բարդութիւնների պատասխանատուութիւնը վայր ենք դնում մեր վրայից։

Այդ որոշումը, որ պաշտօնական և ուղղակի խոստովանութիւն էր հայերի անմեղութեան և Թուրքերի մեղաւորութեան, ուղարկվեց Թուրք բնտրեալներին, այսինքն նրանց կոմիտէին, մի պատճէնը Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի ղեկավար մարմնին, իսկ միւս պատճէնը Կովկասի փոխարքային։

Այդ գրութիւնով ս. դեմօկրատները ցոյց տուին, որ իրանք վերջապէս սկսեցին հասկանալ, թէ ինչ է Թուրքական շարժում պատճառող բանը կամ գոնէ նրա ահագին մեծամասնութիւնը. ուրեմն՝ մինչև այդ եղած բոլոր մեղադրանքները հայերի և մանաւանդ Դաշնակցութեան հասցէով արդիւնք էր տգիտութեան և այժմ յետ են քաշւում, խոստովանելով իրանց անկարողութիւնը։

Սակայն այդ երեկոյեան դէպքերից դեռ մի վայրկեան առաջ նրանք բերել էին Եղիզարօվի և միւս Թուրք ընտրեալների (22 հոգի) առաջարկները։ Թուրք կոմիտէն պահանջում էր, որ քարոզներ խօսվեն (կարծես քիչ ենք խօսել!!), բարձր հոգևորականութիւնը միջամտէ (կրկին կոմեդիա են ուզում!?) և այն, և վերջապէս—որ Թիֆլիսում եղած Թուրքական ուժերը զինված Թափօրով շրջեն հայոց Թաղերով…

Դաշնակցականներն, ստանալով Թուրքական կոմիտէի այդ խակական ապաշտօնական առաջարկները, ծաղրեցին. նրանք անմիջապէս մշակեցին 3-4 կէտերից բաղկացած պայմաններ և տուին սօց.-դեմօկրատ ընկերներին, որպէս զի նրանք ևս քննեն ու, հաւանութիւն տալով, իբր միջնորդ առաջարկեն Թուրքերին։ Այդ պայմանների էութիւնը այս էր. մենք յարձակվող չենք, այլ պաշտպանվող. մեզ տուէք լեգալական գարանտիա-գրաւական ձեռք գոյքով ու կեանքով, որ այսուհետև խաղաղութիւնը չէք խանգարի Թիֆլիսում և շրջակայքում, մենք էլ տալիս ենք նոյն գարանտիան։ Բացի դրանից՝ հեռացրէք Թիֆլիսից իրանց բնակատեղերը դրսից բերված զինված ուժերը, առանց վնասելու շրջակայ հայ և վրացի գիւղերին։

Ահա այդ բանակցութիւնների մէջ էին, երբ Թուրքերը յարձակվեցին ու մեր սօց.-դեմօկրատ 4-5 ընկերների արեան Թանկագին կաթիլները հոսեցնելով, մի անգամից վերջ դրին բոլոր բանակցութիւններին։

Անցնենք այժմ ժամանակագրական կարգին։

Ամբողջ օրը, նոյեմբերի 28-ին, գործունէութեան միակ վայրը Թուրքի մէյդանն էր։ Այդ հրապարակը կատարեալ պատերազմի դաշտ էր։ Մի կողմում կանգնած էին բոլոր քրիստոնեաները, իսկ միւս կողմում՝ մահմեդականները։

Դեռ նախընթաց գիշերվանից կապել էին յեղափոխականները մի քանի պատնէշներ կամ բարրիկադներ։

Առաւօտեան ժամը 9-ին Թուրքերի յանդգնութիւնը հասաւ իր կակաթնակէտին։ Նրանք սկսեցին զարհուրելի կրակ տեղալ մզկիթի, նրա կից Թուրքական հիւրանոցի և դեղատան գլխի սենեակներից։ Մերոնք պատասխանեցին զալպերով։ Յետոյ միայն ինձ համար պարզվեց, թէ ինչու զգուշաւոր ու վախկոտ Թուրքերն այդքան յանդուգն քայլ արին։ Նրանք զօրքի և յեղափոխականների ուշադրութիւնն ուղեցին բևեռել յիշված 3 կէտերի վրա, որպէս զի անցնեն քաղաքային կլուբի դիմացը գտնված հայի մեծ շէնքը, «ալաֆների» խանութների վերին յարկը։ Եւ նրանք նպատակին հասան։ Յունական եկեղեցու բակից ծակեցին հայերի խանութները և ներս մտան այդ հրաշալի դիրքը։

Ժամը 11-ի մօտերը նրանք արդէն գրաւել ու ամրացրել էին այդ դիրքը, իսկ դաշնակցականներն արդէն բարրիկադներ էին շինել հայերի մասերից դէպի մէյդանը բերվող բոլոր 5 փողոցների բերաններին, իսկ ս. Գէորգի կողքի փողոցը մնացել էր առանց պատնէշի, միայն մի քանի զինուորներով բռնված, որովհետև այնտեղ չէին հասնում Թուրքերի գնդակները։ Բաց էր մնացել նաև «ժելեզնի բեադ»-ի բերանը, էլէքտրաքարշի անցնելու տեղը դէպի կամուրջ։

Յանկարծ Թուրքերն իրանց նոր դիրքից մի հրէշաւոր, մի դժոխային կրակ բաց արին հայերի և զօրքերի վրա։ Սուլում էին գնդակները, շչչում և պատերին ու դռներին կպչելով, զարհուրելի տրաքոցներ հանում։ Ս. յեղափոխական և ֆեդերալիստ մեր ընկերները Ջրի խողովակներով բարձրացան և մի խանութի վերին յարկում նոր դիրք ստեղծեցին. դաշնակցականներն էլ գտան մի նոր, տիրող ու հրաշալի դիրք… իսկ դաշնակցականների մի մասը Թուրքերի գնդակների տակ սկսեց բարրիկադ կազմել էլէքտրաքարշի դէպի կամուրջ անցնելու տեղում։ Մի քանի րօպէում փողոցի բերանը բռնվեց, բարրիկադը պատրաստ էր։ Երկու դիրքերից և 5 բարրիկադների ետևից սկսեցին միահամուռ կրակ Թափել Թուրքերի դէմ՝ իբր պատասխան նրանց կրակի։

20—25 րօպէ շարունակ մէյդանը կատաղեալ դժոխք էր։ Դղրդում էին չորս կողմի շէնքերը, դղրդում էր մայր-երկիրը։

Աչքովս տեսնում էի բօրչալուեցի Թուրքերի վեր բարձրացող և վայր իջնող գլուխների անհամար բազմութիւնը, իրանց բռնած հիանալի դիրքի բազմաթիւ լուսամուտներից։ Դրանք մարդ-գազաններ էին—գող ու արիւնարբու—որ եկել էին կողոպտելու, Թալանելու, արիւն հոսեցնելու և դրանով իրանց տիրոջ, իրանց հրամայողների գաղտնացած կրքերին բաւականութիւն տալու, իրանց էլ կողոպուտով հարստացնելու։ Բայց ազատութեան կարիճ մարտիկները և զօրքը հարամ արին նրանց այդ ցանկութիւնը։

Երևի մերոնց կրակը շատ մարդկանց հնձեց, որովհետև Թուրքերը շուտով փախան այդ դիրքից և 20—25 րօպէ հազիւ անցած, այլ ևս յիշված տնից կրակ չերևաց։

Կռուի դաշտը եկաւ գեներալ Մալաման։ Նրան զեկուցին ամեն ինչ, ցոյց տուին, որ միշտ սկսում են կրակ անել Թուրքերը, ապա այս կողմից պատասխանում են զօրքը և կուսակցութեան կամաւորները։ Նա իր ականջով լսեց այդ բոլորը և միակ հրամանը եղաւ. «ի զուր տեղը չարձակել, բայց երբ արձակում են, անպատճառ սպանել…»

Ինձ համար հրամանատարի կամ կառավարութեան բռնած այդ անվճռական դիրքը պարզ ապացոյց էր, որ կրկին Բագուի և Նախիջևանի կոմէդիան էր խաղացվում Թիֆլիսում. կրկին կառավարութիւնը գիտէր, թէ ինչ են անում Թուրքերը, նրանց ղեկավարները—բայց ոչ մի լուրջ միջոց ձեռք չառաւ աղէտը առաջն առնելու։ Բացի այդ, նա ամեն հնար գործ գրեց խանգարելու ժողովրդական ինքնապաշտպանութեան գործը։

Եւ յիշում էի ես Բագուն։ Որ տնից մի ատրճանակ էր կրակվում—Թնդանօթը դնում, քարուքանդ էին անում։ Եւ այդ տները միշտ հայի տներ էին լինում… Իսկ այստեղ հազարներով գնդակ էին արձակում Թուրքերը զօրքերի վրա, բայց ոչ մի տուն չը ռմբակոծվեց, թէև Թնդանօթները Թատրօնական ձևով բերել դրել էին Հալաբարի կողմից, ուղղված դէպի Թուրքական մասը…

Իսկ պ. նահանգապետը, իսկ պ. ոստիկանապետը մի քանի օր առաջ հրապարակով երդվում էին, որ իրանք պրօվօկատոր չեն, իրանք բարեացակամ մարդիկ են…

Այո, գեներալ Մալաման եկաւ, ձևի համար հրամայեց խփել, բայց նրանից յետոյ երբ մի նոր խումբ զօրք եկաւ, նոր օֆիցէրներով, նրանք այլ ևս չարձակեցին… ոչ միայն չարձակեցին, այլ և ամենայն սառնարիւնութեամբ սկսեցին դիտել հայերի ու վրացիների խանութների կողոպուտը, հրդեհումները…

Գեներալ Մալաման այդտեղ հարցրեց մի դաշնակցական ներկայացուցչի, թէ ում պէտք է դիմել Թուրքերից բանակցելու համար։ Դաշնակցականը պատասխանեց. «Ձերդ գերազանցութիւն, պարզ է Թէ ում պէտք է դիմել—այս բոլոր հրէշութիւնների գլխաւոր հեղինակին—նրան՝ ով որ բերել է տուել Բօրչալուից այս Թուրքերին»։ —«Իսկ դա ո՞վ է», հարցրեց գեներալը։ —«Պաշտօնաթող օֆիցէր Եղիզարօվը»։ —«Ո՞րտեղ է նրա տունը»: «—Վօրօնցօվսկի փողոցում, քաղաքային բուժարանի մօտ»:

Դրանով վերջացաւ խօսակցութիւնը:

Գեներալը նոյն օրը բարձրացաւ նաև Բօտանիքական այգու դիրքերը. այնտեղ էլ խօսեց զօրքերի ու դաշնակցական կամաւորների հետ...

Ամբողջ օրը հրացանները և ատրճանակները որոտում էին երկու կողմից:

Հետեւեալ միջադէպը, որ պատահեց երեկոյեան դէմ, պարզ ցոյց է տալիս Թուրքի հոգին, նրա բնաւորութիւնը:

Խիստ զալպերից յետոյ, երբ հեռուից տեսնւեցին Թուրքերի գլորվող դիակները և երբ զալպերը մի քիչ Թուլացան, Թուրքերը պարզեցին սպիտակ դրօշակ և սկսեցին բղաւել, —«եարալը՜ւ եարալը՜ւ» (վիրաւոր, վիրաւո՜ր): Կարմիր Խաչն խնդրեց մեր կողմին դադարեցնել հրաձգութիւնը, որպէսզի գթութեան քոյրեր գնան, վիրաւորներին օգնեն:

Հերոս քոյրերն առաջ անցան: Սպիտակ դրօշակը ծածանվում էր:—Մեր զէնքերը լռեցին, լռեցին և զինուորները: Բայց յանկարծ, —ո՜վ դաւաճանութիւն, Թուրքերն սկսեցին ամեն տեսակ իրեր, լի պարկեր, արկղներ Թափել և կազմել մի հիանալի բարրիկադ...

Բանից երևաց, որ Թուրքերը բռնութեամբ պահել են գթութեան քոյրերին, մինչև որ իրանք վերջացնեն իրանց բարրիկադի կառուցումը:

Այդ լուրը կայծակի արագութեամբ տարածվեց բոլոր կազմակերպութիւնների մարդկանց մէջ և բոլորն էլ զարմանքով ու զզւանքով սկսեցին խօսել Թուրքական խաբեբայութեան մասին: Իսկ ես քթիս տակին ծաղրում էի այդ անփորձ մարդկանց, որոնք դեռ նոր էին տեսնում Թուրքական զարշելի դաւաճանութիւնը... և զարմանում, որ դեռ Թուրքի հոգին չը ճանաչած, շտապում են հայերն դատապարտել:

Եւ մեթէ այսօր նոյնը չեն անում շովինիստ «Իվէրիան», քամէլիօն «Возр.» և մասամբ նոյն իսկ «Ցնորիս Փուրցելի»... Իսկ „Т. Листокъ"-ի համար խօսել չարժէ.

Մօտեցաւ Թուրքերի երեկոյեան նամազի ժամը: Կուռք Թուրքերը գնացին Ալլահին աղօթելու: Կրակը դադարեց վայրկեանաբար: Դա ևս պարզ ապացոյց է, որ Թուրքերն են սկըսում միշտ կրակ անել, յետոյ մեր կողմից պատասխան են ստանում: Երբ նրանք դադարեցնում են կրակը, մերոնք միշտ լուռ են մնում:

Կրակը Թափվում էր: Իսկ մեր սօցիալ-դէմօկրատ ընկերները, Թողնելով իրանց դրուժինայի մի մասը մեզ մօտ, բարրիկադներից կռւելու մեզ հետ, միւս մասը տարան դէպի Նախալօվկա, քաղաքի այլ մասերը, որովհետև լուրեր եկան, որ խուլիգանները և հայրենասէր կոչվածները զանազան նշաններ են ցոյց տալիս, բաւական չարագուշակ նշաններ: Պետկի փողոցի ռուս միսսիօնարական եկեղեցում ամբողջ գիշերը ժողովներ են եղել. քահանան «հայրենասիրական» քարոզներ է ասել...: Քաղաքի զանազան մասերում բռնել էին 10—15 խուլիգաններ—բոլորը զինված, մի քանիսին նոյն իսկ կրակ արած ժամանակ... Մէկին ինքս տեսայ. զոյգ ատրճանակ ունէր—մէկն ապակուց, միւսն իսկական—մի փամփուշտ նոր արձակած, Աբասաբադեան հրապարակում: Բռնել էին նրան, ապտակել և սօց.-դէմ.-ին յանձնել...

Սօցիալիստ-յեղափոխական կարիճներն աւելի նման կռւում էին: Ս.-ը, առիւծ Ս.-ը, անխոնջ Դ...

Իսկ Սօցիալիստ-ֆէդէրալիստ վրացի մեր ընկերները...

Ո՞ր մէկին գովես, ծրով հիանաս: Բոլորն էլ հերոսաբար կռւում էին, բոլորն էլ եղբայրներ էին ոչ «ի Քրիստոս,» այլ «ի կուլտուրա:»

Այդ զանազան կազմակերպութիւնները բաժանել էին քաղաքը և հսկում ամեն մէկը մի մասի վրա: Մութ ուժերը դաշնակցել էին բոլոր փայլուն ուժերի դէմ. կարծես Թէ սանդարամէտը կռիւ էր մղում հրեշտակաց գնդի հետ:

Արիւնը մի կողմից էր հոսում, բանակցութիւնները միւս կողմից էին առաջ ընթանում: Սօցիալ-դէմօկրատներն ուղարկեցին իրանց Ծերունին փոխարքայի մօտ, նրան բացատրեցին իրերի դրութիւնը: Ասում են, որ փոխարքան իր մօտ հրաւիրեց Եղիզարովին, 1-2 ժամ խօսեց հետը... Եւ լուրեր տարածեցին քաղաքում, որ իբր Թէ փոխարքան ասել է, Թէ «եթէ դուրս չը հանէք դրսից եկածներին, ձեզ կսպանեմ»...

Բայց աւա՜ղ, շուտով երևաց, որ այդ ամենը փօտօգրաֆիական կրկնութիւն է Բագուի կօմէդիայի:

Այդ գիշերը, եթէ դաշնակցականները խօսք տուին որ չեն արձակի, սարի դիրքերը կը դատարկեն, գիշերները խմբական պահակներ չեն պահի և այլն, իսկ կառավարութիւնը խիստ միջոցներ կը գործադրէ Թուրքերի դէմ:

«Նոր պարլամէնտի» հայ անդամներն ազնիւ խօսք առան նահանգապետից, գեն. Մալամայից, փոխարքայից, գեն. Ռիլսկուց, որ մեր տղայոց չեն խուզարկի, որ Թուրքերի դէմ խիստ միջոցներ ձեռք կառնեն, որ հրդեհների ու ներս խուժումների առաջը կառնեն...

Վստահ կառավարական անձերի ազնիւ խօսքի վրա, եկան իրանք էլ ազնիւ խօսք տուին դաշնակցականներին, որ ոչինչ չի լինի, որ զօրքը կարգը կը պահպանէ և այլն, և այլն:

Սօցիալ-դէմօկրատների ներկայացուցիչ Ծերունին պալատում խոստանում է զէնքերը վերադարձնել, իսկ նրա ընկերները չեն տալիս, պատճառաբանելով, որ դեռ քաղաքը խաղաղված չէ, դեռ երկիւղ կայ խուլիգաններից, ուրեմն և Թուրք խուլիգանական մասսայից...

Այդ և նման անվերջ բանակցութիւններ, ժողովներ ու ճառեր տեղի ունեցան, իսկ նոյն ժամանակում Թուրք ամբոխը, կառավարութեան գուրգուրած այդ սրիկայական խուժանը շարունակում էր իր կողոպուտը:

29 նոյեմբերի: Լուսացաւ մի չարագուշակ օր:

Առաւօտեան, երբ դաշնակցականներն իրանց բարձր դիրքերից դուրս էին եկել, երբ ս. դ. երը հեռացել էին կռւի վայրից, երբ ս. ռեվօլիւցիօնէրները և ֆէդէրալիստները՝ դաշնակցականների հետ միասին սպասողական դիրք էին բռնել՝ մի անգամ էլ տեսնելու համար կառավարական ազնիւ խօսքը, յանկարծ տարածվեց չարագուշակ լուրը.

—Հրդեհում են Թուրքերը:

Այո՛, նրանք հրդեհեցին 5—6 կէտից, բոլորն էլ հայերի տներ, խանութներ, գործարաններ:

Թուրք գազանը զսպվեց զէնքով, նա չը կարողացաւ զէնքով ոչինչ անել, չը կարողացաւ յագեցնել իր արեան ծարաւը—դիմեց հրդեհի, մարդկային հրէշութեան ամենաստոր, ամենազազիր տեսակին:

Առաջին գործը եղաւ հայերի կողմից դիմել կառավարութեան, պահանջել ռմբակոծութիւն մի երկու Թուրք տների, աւազակապետների բնակարանների... Մերժեցին, քաղցր ժպիտը շրթունքներին մերժեցին:

Պահանջեցին, որ զօրքը գնայ և բռնէ հրդեհողներին—սատանայական քաղցր ժպիտով, մերժեցին:

Պահանջեցին հրդեհաշէջներ: Հրամայեցին, կօմանդան ուղղի ընկաւ Հալաբարով, Նաւթլուղով, Մնացականեանի կամուրջով, բայց Թուրքերը ներս չը Թողեցին իրանց Թաղը: Բրանդմայստերը, հրդեհաշէջների գլխաւորը պատմում էր Թէ ինչպէս Թուրքական գնդակները սուլում, Թռչկոտում էին իր գլխի վերեւով—«ուզում էին ինձ սպանել, որ չը հանգցնեմ հայերի կայքերի կրակը»:

Յետ եկաւ կօմանդան վախեցած: Խնդրեցինք զօրքեր, որ ուղեկցեն—չը տուին նոյն անատակ ժպիտով:

Իսկ հրդեհը լափում էր, անխնայ լափում: Հրեղէն լեզուները վեր էին բարձրանում, դէպի երկինք—կարծես պատմելու մեռնող բիւրօկրատիայի նեխված բարոյականութիւնը... ում, չը գիտեմ:

Մինչև ժամը 8-ը այրվում էին հայի շէնքերը, բայց կրակը, որ աւելի արդար է քան Կովկասի բիւրօկրատիան—անցաւ Թուրքերի տներին ու խանութներին:

Կրակն սպառնում էր Ս. Գէորգի դպրոցներին և շրջակայ ամբողջ հայ Թաղին: Կառավարութիւնից յոյսը կտրած, հայ երիտասարդները դիմեցին ինքնօգնութեան...

Պաշտելի՝ հերոսական հոգիներ: Պէտք էր տեսնել Թէ ինչպէս Ջրմուղ մեքենայ գնեցին գիշերով, բերին տեղ հասցրին, ինչպէս մանր ամաններով, տներից դուրս բերած պղինձներով ջուր էին բերում, մեքենան լցնում, հանում ջուրը, դիմացի տներին սրսկում... կրակը, բոցերը կատաղած փշշում էին գալարվող օձի նման, վշվշոց, սուլոց հանում, ճաթճաթում—լափում չորս կողմը: Իսկ մեր հերոսները կրակի մէջ ընկնում, մեքենան հարում, ջուրը սրսկում... կոտրատված դռները պատնէշ ծառայեցնում, որ կրակից մի քիչ զերծ մնան և խեղճ, աղքատ մարդոց տները և ամբողջ Թաղն ազատեն:

Ահա բարձրացաւ մի կտրիճ բալկօնը: Դիմացն այրվում էր մի գինետուն. օղու և սպիրտի կատաղի բոցը Թեթև խփում էր ուղղիղ բալկօնին: Կտրիճը կանգնել է և կացինով կոտրում է բալկօնը: Ներքևից ջուր են սրսկում հերոսի վրա... Բոցերն այրում են նրան, բայց նա գործում է...

Ահա բացվեց գինետան տանիքը, բոցերը ճանապարհ գտան դէպի վեր բարձրանալու. բալկօնն ազատվում է...

«Տղերք ջան, կէս ժամ էլ պահենք կրակի ուժը. մի ամբողջ Թաղ ենք ազատում, գոչում է մի դաշնակցական: Եւ տղայքը սիրտ են առնում: Բժիշկ Մ. առաջ ընկած, առիւծի պէս կռւում էր ոչ Թուրքի, այլ նրա ծնած զաւակի—հրդեհի, կրակի դէմ:

Ժամը 9-ն էր—վերջապէս եկաւ հրդեհաշէջը, քանդելով մեր բարրիկադները: Եկաւ: Դողում են կօմանդայի գլխաւորները. «մեզ չե՞ն սպանի»: Մենք ենք առաջ ընկնում, նրանք մեր ետևից են գալիս... Հաւատացնում, երդվում ենք, որ դիմացն էլ մեր տղայքն են դիրք բռնել—երկիւղ չը կայ... Վերջապէս գործում է զօրեղ հոսանքը: Բայց արդէն հայ Թաղը մերոնք, մեր հերոսներն ազատել էին, այժմ հրդեհաշէջն ազատում էր Թուրքի տները:

Այդ րօպէին լուր եկաւ, որ կողոպտում՛ են վրացիների և հայերի խանութներ, հրդեհի վայրից մի քիչ հեռու: Դաշնակցականներից մէկը գնաց օֆիցերի մօտ, զեկուցեց նոր Թալանի մասին, խնդրեց գոնէ 3 զինուոր տալ...

«Հրամայված չէ»—եղաւ պատասխանը:

—Բայց, պ. օֆիցէր, կան բաներ, որոնց համար հրաման հարկաւոր չէ. խաղաղ ու անմեղ քաղաքացիների գոյքը յանձնված է ձեր խնամքին—կողոպտում են. ուղարկեցէք միայն 3 զինւոր, կողոպտիչներն անզէն են...

—Չեմ կարող:

—Այն ժամանակ ես ստիպված կը լինեմ իմ տղայոց հրամայել գնան. կը սկսվի հրաձգութիւն, կարգը կը խանգարվի:

—Какъ хотите:

—Ուրեմն, պ. օֆիցէր, դուք առիթ էք տալիս ամբոխին կարծելու, որ Թուրքերը ձեր գիտութեամբ են կողոպտում...

Ոչինչ չազդեց, ոչ խօսք, ոչինչ:

Զեկուցին գեներալին այդ դէպքը: Կանչվեց օֆիցէրը:—«Ոչ մի կողոպուտ տեղի չէ ունեցել այս երեկոյ, սուտ է»:

Աստղը գիտէր, որ ասածը սուտ է: Լաւ պաշտօնատար անձերն օֆիցէրի այդ զեկուցմանն երեւի նոյնպէս չէին հաւատում, բայց... կօմէդիան պէտք էր խաղալ:

Եւ խաղացին ու դեռ խաղում են:

Լուր բերին օֆիցէրները, որ 300-ից աւելի բօրչալուեցի Թուրքեր փախան: Մի քիչ յետոյ էլ աւելացրին, որ փախան նաև ուրիշները պարկերով աւար հետները տանելով: Որքան ճիշտ է, չեմ երաշխաւորում:

Ինչ է լինելու վաղը, ինչ նոր դաւեր են լարվում այսօր... չը գիտեմ:

Մութ է իշխանաւորների տակտիկան: Իր գագաթնակէտին է հասել Թուրքերի խուլիգանական մասի լկտութիւնը: Իսկ պատմող ձեռքը—Դաշնակցութիւնը առ այժմ սպասողական դիրք է բռնել:

—

Մի բնորոշ փաստ ևս:

Հայերից 3 հոգի գնում են գեներալ-Մալամայի մօտ, յիշեցնում նրա և միւս բարձր պաշտօնեաների տուած ազնիւ խօսքը:

Այնտեղ է լինում—Աձէդ Աղա Շահթախտինսկին:

Ես նրան տեսայ միջկուսակցական ժողովում, «Возр.„ լրագրի խմբագրատան մէջ: Այնտեղ նա հագել էր խաղաղասէրի դիմակ և սօցիալ-դէմօկրատ էր ձևանում...

Ամեն սրբութիւն կարելի է ոտնատակ տալ, սակայն ոչ այդքան...

Նահանգապետի և ուրիշների ներկայութեամբ, նոյեմբերի 29-ին Շահթախտինսկին բարձրաձայն յայտնում է.

«Քանի որ հայերը չեն դադարում պօլիտիքայով զբաղվել, Թուրքերը նրանց պէտք է կոտորեն:»

Եւ այդ ոստիկանական դերը, էքս-խմբագիրը կարողանում է հաշտեցնել սօցիալիստական սուրբ ու պաշտելի վարդապետութեան հետ, սօցիալ-դէմօկրատիական մաքուր կուսակցութեան տակտիկայի հետ:

Թողնում եմ սօցիալ-դէմօկրատ ընկերներին դատելու այդ վարմունքը:

Խաժակ

ԲԱԳՈՒԻ ՕՖԻՑԵՐՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Բագու քաղաքում հրատարակված է հետևեալ ազդը:

«Բագու քաղաքի ազգաբնակչութեան ի գիտութիւն:

Ի նկատի ունենալով քաղաքի տագնապալից վիճակը շնորհիւ այն լուրերի, որ տարածում են զանազան ազգութիւններին պատկանող խուլիգանները և պրօվօկատօրները, Թէ իբր Բագու քաղաքում պատրաստվում են ջարդեր,—տեղական գարնիզօնի օֆիցերների կազմակերպված խումբը իր բարոյական պարտաւորութիւնն է համարում, Թելադրված իր քաղաքացիական և ծառայողական պարտքից, յայտնել ի գիտութիւն քաղաքի ազգաբնակչութեան, որ նրանք ամենախստական միջոցներ ձեռք կառնեն անխնայաբար զսպելու ամեն տեսակ խուլիգանութիւն, որ կարտայայտվի սպանութիւններով, ջարդերով, կողոպուտներով և ուրիշ բռնութիւններով, ով և կատարէ և ինչ տեսակ դրօշակի ու լօզունգի տակ էլ որ լինի:

Բագուի գարնիզօնի օֆիցէր կազմակերպված խումբ:

23 նոյեմբ. 1905

Ահա մի գովելի օրինակ, որին պէտք է հետևեն և Թիֆլիսի գարնիզօնի օֆիցէրները:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ը ԹԻՖԼԻՍՈՒՄ

Առաւօտեան մտնելով հայ Դաշնակցութեան կենտրօնական շտաբը, ես իմացայ, որ Դաշնակցութիւնը, հաւատալով անձնապէս Կովկասի Փոխարքայի օգնական գեներալ Մալամայի և Նորհաստատ յանձնաժողովի նախագահ Ջունկովսկուն, համաձայնել է ինքնապաշտպանութեան համար իր զինված խմբերին հեռացնել դիրքերից և յանձնել այդ դիրքերը զօրքին այն պայմանով, որ Թուրքերին ևս հեռացնեն իրանց դիրքերից:

Մինչև ժամը 4-ը կէսօրից յետոյ դրութիւնը անփոփոխ էր: Ժամը 4½-ին նորից մտայ շտաբը. յանկարծ մի հայ կտրիճ, վրդովված ներս վազեց և յայտնեց, Թէ հէնց որ հայերը Թողեցին իրանց դիրքերը և զինուորները գրաւեցին այդ դիրքերը, Թուրքերը սկսեցին հրդեհել Մէյդանի մէջտեղի հայերի խանութները, և զօրքը լուռ հանդիսատես է հրդեհաձգութեան ու ոչ մի իրական գործողութեան չէ դիմում: Հրդեհաշէջ խումբն ևս չէ եկել: Այդ լուրն սաստիկ յուզմունք առաջացրեց: Ինձ խնդրեցին անմիջապէս մի քանի անձանց հետ գնալ գեներալ Մալամայի մօտ և յայտնել իրողութիւնը, նրա ուշադրութիւնը հրաւիրել և խնդրել հրամաններ տալ ճշտիւ կատարելու տուած խոստումները: Չէ՞ որ խոստացել են պաշտպանել հայերի գոյքը և կեանքը, երբ ինքնապաշտպանութեան հայ խմբերը հեռանան: Այժմ հազիւ նրանք հեռացան, հրդեհաձգութիւններ են լինում և զօրքն ու իշխանութիւնն անտարբեր են մնում:

Ես դուրս վազեցի. շտապով գնացի Փոխարքայի դիւանատունը, ուր այդ ժամանակ նիստ էր գումարված խառն յանձնաժողովը Ջունկովսկու նախագահութեամբ: Մտայ և եղելութիւնը պատմեցի Թիֆլիսի նահանգապետին: Նիստը ընդհատվեց. դահլիճի լուսամուտներից արդէն նկատվում էր հրդեհից առաջացած Թանձր մուխը: Նահանգապետը հեռախօսով կարգադրեց որ հրդեհաշէջների խումբը գնայ: Ամենքը սկսեցին յուզված խօսել, առաջարկվեց գնալ խմբովին գեներալ Մալամայի մօտ:

Կէս ժամ հազիւ էր անցել, երբ դահլիճի դռները շրխկոցով բացվեցին և ներս մտան մի խումբ ինտելլիգենտ մարդիկ—գրողներ, բժիշկներ, փաստաբաններ, հասարակական գործիչներ ու յուզված, զայրացած, գոռալով, պոռալով, պահանջեցին ընդհատել նիստը ու գնալ պահանջել իշխանութիւնից՝ կատարել իր պարտքը: «Դուք մեզ խաբեցիք, դուք մեզ մոլորեցրիք. շարունակվում է հին տակտիկան, մեզ լաւ յայտնի՝ Բագւում, Շուշում, Նախիջևանում գործադրված՝ տակտիկան: Մեզ ազնիւ խօսք տուիք, որ դուք կը պաշտպանէք մեզ, եթէ կազմակերպութիւնները հեռանան իրանց դիրքերից. հեռացան և ինչ դուրս եկաւ»—լսվում էին շարունակ զայրացած աղաղակներ:

Ամբողջ յանձնաժողովը և եկած մարդիկ դիմեցին գեներալ Մալամայի բնակարանը. արդէն ժամը 6-ի մօտերքն էր: Ներկայացուցիչների կողմից պ. պ. Յարութիւնեան, Խատիսեան և ուրիշներ յայտնեցին նրան, որ հայ հասարակութիւնը սաստիկ վրդովված և յուզված է և այն կարծիքի է, Թէ իրան խաբել են: «Սոսկալի է մեր դրութիւնը Ձերդ Գերազանցութիւն—ասացին պ. Խատիսեան և պ. Յարութիւնեանը—Ձեր և պ. Ջունկովսկու կողմից հաւատացրել ենք կազմակերպութիւններին և հայ հասարակութեան, որ երբ ինքնապաշտպանութեան խմբերը հեռանան, զօրքը կը կատարէ իր պարտաւորութիւնը. այժմ հազիւ նրանք հեռացան, Թուրքերը հրդեհ են ձգում և զօրքը ոչ մի դիմադրութիւն չէ ցոյց տալիս: Հրդեհը կարող է տարածվել, բռնել ամբողջ քաղաքը. Թուրքերը կարող են ներս խուժել և զօրքը դարձեալ դիմադրութիւն ցոյց չի տայ. ժողովուրդը կարող է բզիկ-բզիկ անել մեզ, որ նրան հաւատացրինք ձեր և պ. Ջունկովսկու ազնիւ խօսքով, Թէ նա կը պաշտպանէ:

Ջունկովսկին ինքն ևս կրկնելով նոյն խօսքերը, խնդրեց կտրուկ միջոցներ ձեռք առնել և առիթ չը տալ ժողովրդին կարծելու, Թէ իշխանութիւնը խաղ խաղաց նրա գլխին:

Գեներալ Մալաման տեսնելով ներկայացուցիչների վրդովմունքը, յուզմունքը, աշխատեց խաղաղացնել, հաւատացնելով Թէ բոլոր հնարաւոր միջոցները ձեռք կառնվեն, Թէ նոր զօրքեր կուղարկվեն և այլն: Այդ միջոցին սակայն, մի նոր անձն եկաւ յայտնելու, որ հրդեհաշէջների խումբը յետ է դարձել, որովհետև Թուրքերը հրաձգութեամբ ստիպել են նրան վերադառնալ և զօրքը ոչ մի օգնութիւն չէ ցոյց տուել, որ խումբը կարողանայ իր պարտքը կատարել:

Նորից վրդովմունք, նորից յուզմունք:

Ներկայ եղողները պահանջում են գեներալ Մալամայից կտրուկ միջոցների դիմել, հրամայել զօրքին հրացանի բռնել ընդդիմացող Թուրքերին:—Բայց հայերն ևս Թոյլ չեն տալիս նրանց անցնել, պատասխանում է գեներալ Մալաման. նրանք Հալաբարից հրաձգութիւն են անում:

Հայերը բողոքում են այդ յայտարարութեան դէմ, ասելով, որ անճիշդ տեղեկութիւններ են հաղորդվում:

Վերջապէս դուրս ենք գալիս գեներալ Մալամայի մօտից, ճնշող, ծանր տպաւորութեան տակ: Մեզ համար պարզ է, որ կտրուկ միջոցներ Թուրքերի դէմ ձեռք չեն առնվելու:

—Գնանք մեր գլխի ճարը տեսնենք, ասում է պ. Ա. Ահարոնեանը:

Եւ մենք գնացինք հրդեհի վայրը: Ես և պ. Ի. Ամիրխանեանը կառքով գնացինք մինչև Արգուտինսկու փողոցը: Արդէն ժամը 6½ էր: Այդտեղ հանդիպեցինք հնչակեանների դրուժինային, որ պաշտպանում էր այդ մասը մինչև Մէյդանը: Նրա մի քանի կտրիճների ուղեկցութեամբ, զանազան ոլորապտոյտ մուտքերով կարողացանք մտնել ս. Գէորգ եկեղեցին: Այդ տեղից հրդեհը շատ լաւ տեսնվում էր. Նրա կայծերը Թափվում էին եկեղեցու բակը: Որովհետև վտանգ կար, որ եկեղեցին ևս կարող է այրվել, պ. Ամիրխանեանցը, իբրև երեցփոխ, կարգադրեց փոխադրել ապահով տեղ եկեղեցու Թանկագին իրերը և գանձը:

Եկեղեցուց իջանք դէպի հրդեհի տեղը՝ Մէյդանի մուտքը: Հայ ինքնապաշտպան խմբերի կառուցած բարրիկադների ետևում կանգնած էին զինուորները և լուռ, անտարբեր նայում էին աճող հրդեհին. այրվում էին հրապարակի վրա եղած հայոց խանութները: Հրդեհաշէջ խումբ չը կար: Մի րօպէ իմ երևակայութեան առաջ պատկերացաւ այն սոսկալի սարսափը, որ պէտք է տարածվէր ամբողջ քաղաքում, երբ հրդեհը հասնելով բարրիկադներին, պէտք է ստիպէր հայ կտրիճներին Թողնել իրանց դիրքերը և Թուրքերը պէտք է ներս խուժէին: Իմ հարցին զինուորների օֆիցերին՝ ինչո՞ւ կրակ չէք անում Թուրքերի վրա, ես ստացայ պատասխան՝ «մեզ հրամայված չէ»:

Մենք վերադարձանք նոյն հնչակեան կտրիճների ուղեկցութեամբ: Ճանապարհին հանդիպում էինք փախչողների, ամբողջ ընտանիքներ մի մի վերմակ, անկողին, բարձ և այլ իրեր փայտոնում դրած, փախչում էին հրդեհից:

Հասանք Դումա, ուր արդէն հաւաքվել էր մեծ բազմութիւն ձայնաւորների և հասարակութեան: Եկաւ այդտեղ մի գուժկան, Թէ կօզակները զինաթափ են անում տղաներին: Նորից իրարանցումն, յուզմունք, նորից աղաղակներ «գնանք, գնանք գեներալ Մալամայի մօտ»: Դարձեալ մի նոր, բազմամարդ խումբ դիմեց Մալամայի բնակարանը և պահանջեց հրամայել ոչ ոքի զինաթափ չանել: Գեներալ Մալաման խոստանում է կարգադրել և տալ հարկաւոր հրամանները:

Վերջապէս աջողվում է նաև համոզել հրդեհաշէջների խումբը, որ նա գնայ հրդեհը հանգցնելու՝ զօրքի պաշտպանութեան ներքոյ: Գեներալ Մալամայի կարգադրութեամբ զօրքը ընկնում է հրդեհաշէջների առաջ և գնում, բայց երբ խումբը հասնում է տեղ, հրդեհը արդէն անցած է լինում Թուրքերի տներին և խանութներին:

Ապա եկան յայտնելու, որ Խարփուխի Թաղում զինուորները զինաթափ են արել հայ խմբերը: Նորից պէտք եղաւ գնալ կօմենդանտ գեներալ Ռիլսկու մօտ և խնդրել, որ կարգադրէ յետ տալ խլած զէնքերը: Գնացինք ես և պ. Թօփչեանը. գեներալը խոստացաւ իր ձեռքից եկածը անել:

Վերադարձանք Դումա, ուր մեծ ժողով էր գումարվել: Քաղաքացիները առաջարկում էին զանազան միջոցներ, այն է կազմել կամաւոր հրդեհաշէջների խումբ, գումարել մի մեծ ժողովրդական միտինգ, բաղկացած 40—50,000 հոգուց և անել կառավարութեան կտրուկ և խիստ պահանջներ՝ վերջ դնելու Թուրքերի յարձակումներին և մաքրելու նրանցից քաղաքը, իսկ եթէ կառավարութիւնը անընդունակ գտնվէ այդ բանին, հաստատելու ժողովրդական կառավարութիւն՝ քաղաքի ինքնապաշտպանութեան համար:

Ես հեռացայ Դումայից ժամը 11-ին յոգնած:

Հ. Ա.

ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Եկատերինօդարից „Начало" լրագրին հեռագրում են. Եկատերինօդարում եղած հետևակ գունդը, նոյեմբերի 17-ին, իր ամբողջ կազմով վռնդեց օֆիցէրներին և տիրացաւ զինարանին, ուր գտնվում էին մօտ 6000 հրացաններ և մեծ քանակութեամբ փամփուշտ: Քաղաքը ընկաւ զինուորների իշխանութեան տակ, որոնք ընտրեցին ֆելդֆեբելին և ունտեր-օֆիցերին հրամանատար: Իշխանութիւնները չը կարողացան զէնքի կանչել կօզակներին, որովհետև զէնք չը կար: Սկսվեցին զինուորների միտինգները բանւորների և հասարակութեան հետ: Միտինգներին հրաւիրված էին սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան ներկայացուցիչները: Ենթադրվում էր գնալ Նովօրօսսիյսկ, այնտեղի բանւորներին զինելու և զօրքերը ապստամբութեան միացնելու համար:

Նովօրօսսիյսկից հեռագրում են «Нов. Ж.» լրագրին. Քաղաքը ապստամբված զօրքերի ձեռքին է: Զինուորները քաղաքը բաժանել են մասերի. կատարեալ կարգը պահպանվում է: Ապստամբված զօրքերը հրաւիրում են բանւորներին միանալ ապստամբութեան:

Ծանր զինուորական անկարգութիւններ եղել են Կիևում, ուր ապստամբված զօրքը ընդհարվել է կառավարութեան հաւատարիմ մնացած զօրքերի հետ: Զոհերը բազմաթիւ են:

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԽԱՂԱՂԱՐԱՐ ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏՆԵՐԻՆ

I

Ընկերներ,

Կօմէդիան վերածւում է տրագիկօմէդիայի: Ռուս կառավարութեան բանակցութիւնը սօցիալ դեմօկրատիայի՝ որպէս «խաղաղարար չէզօք տարրի» հետ և նրան զէնք առաջարկելը, —ըստինքեան մի պարադօքս էր, մի անսովոր կօմեդիա, որի տակ քօղարկված էր կառավարութեան պրօվօկացիան պասսիւ որակով: Այդ կօմէդիան սկզբում ուրախառիթ յոյսեր ներշնչեց անհեռատես մասսայի մէջ, որին պահ մի Թւում էր, որ կառավարութեան այդ քայլը չի կարող բարեմիտ չլինել: Դժբախտաբար ինքը՝ յեղափոխական պրօլետարիատի քաղաքական ներկայացուցիչը, որ իր բոլոր քաղաքական գործերի մէջ այն աստիճան հետեւողական ու ռեալիստ է,—չունեցաւ այս դէպքում իր սովորական անսասան հետևողականութիւնն ու հեռատեսութիւնը: Նրա բարի միտումները շահագործեց կառավարութիւնը:

Եւ ահա այժմ կօմեդիան վերածվում է տրագիկօմեդիայի, որի տակ արդէն քօղարկված է ակտիւ պրօվօկացիա: Կառավարութիւնը «աւարտած» է համարում «խաղաղարարութեան միսիան», ուստի անխնայ յետ է վերցնում «տըւած շնորհները»—զէնքերը սօցիալ-դէմօկրատներից, արգելում է միւս ինքնապաշտպան կազմակերպութիւններին՝ Դաշնակցութեան և ֆեդերալիստներին հրապարակով դիրքեր գրաւելու: Այժմ սկսվել է կռիւը, ուստի «ակտիւ դիմադրողն ու կռւողը»—ասում են—պիտի լինի միայն զօրքը: Իսկ վերջինիս «ակտիւ կռիւը» արտայայտվում է նրանով, որ Թուրք ամբոխը ձեռնարկել է իր համար այնքան բնական ու սովորական այրման ու հրկիզման գործին, և «ակտիւ կռւող» զօրքը ոչ միայն ինքը չէ արգելում այդ աւերումը, այլ և Թոյլ չէ տալիս ինքնապաշտպան խմբերին մէջ խառնվելու:

Ընկերներ, կառավարութեան այդ երկայրի, սկզբում «յուսատու» և ապա արմատապէս «յուսախաբ» դիրքն ու քաղաքականութիւնը նոր երևոյթ չէ և չեն կարող վրիպել այն ինքնապաշտպան կազմակերպութիւնների աչքից, որոնք տասն ամիս շարունակ կրում են իրանց վրա այդ դառն իրականութեան ծանր լուծը: Եւ Թիֆլիսը չէր կարող երբէք բացառութիւն կազմել այն քաղաքների շարքում, ուր առաջ մղվող քաղաքականութեան մեխանիզմը նոյնն է:

Բացառիկ կողմը, Թիֆլիսի հայ-Թրքական ընդհարումների, կայանում է նրանում, որ այստեղ սկզբից և եթ մասնակցեց գործին և շահագրգռութիւն ցոյց տուեց սօցիալ-դեմօկրատիան:

Ամբողջ տասն ամսվայ ընթացքում արիւնլուայ Անդրկովկասում այս առաջին անգամն է, որ Ռուսաստանի ամենամեծ քաղաքական-յեղափոխական կուսակցութիւնը հանդէս է գալիս իր խաղաղարար միսիայով. սա արձանագրութեան արժանի փաստ է:

II

Սակայն այժմ աւելի քան երբ և իցէ հարց է ծագում կաթեգօրիկական վճռականութեամբ իւրաքանչիւր յեղափոխականի համար՝

—Ի՞նչ անել այժմ, երբ կառավարութեան խայտառակ պրօվօկացիան իր ամբողջ մերկութեամբ հանդէս է եկել հրապարակի վրա:

Ի՞նչ դիրք պէտք է բռնեն այժմ խաղաղարար չէզօք կազմակերպութիւնները—բացառապէս սօցիալ դեմօկրատիան—երբ նրանց համար անխուսափելի դարձաւ շօշափելի փաստերով, որ մեր հարևան Թուրք ժողովուրդը—աւա՜ղ դեռ այն աստիճան խաւար, քաղաքականապէս ազէտ և խուլիգան ամբոխութեամբ շահագործվող ամբոխը—այն տարրը չէ, որի հետ կարելի լինի այնքան հեշտ դաշն կապել համերաշխութեան վսեմ գաղափարով:

Կրկնում ենք, ինչ վճռականութեամբ պիտի հրապարակ գայ Թիֆլիսի սօցիալ-դեմօկրատիական կազմակերպութիւնների ամենաուժեղ ֆրակցիան՝ «փոքրամասնութիւնը», երբ երերվող կառավարութիւնը խաղ խաղաց նրա հետ և ձգտում է մեկուսացնել, բոլորովին չէզօքացնել նրան իր դերի մէջ, ու կրկին մենակ Թողնել հայերին անհաւասար կռւի մէջ:

Մեզ համար կասկածից դուրս է, որ Թիֆլիսի սօցիալ դեմօկրատիան պէտք է դեռ այսուհետև ցոյց տայ իր ստանձնած պատասխանատու դերի դրական ու օբյեկտիւ արժէք: Նրա ապարդիւն ու անհետևանք անցած խաղաղարար միսիան պէտք է անհրաժեշտօրէն փոխարինուի ուժեղ ու անդողդող ինքնապաշտպանողական միսիայով: Նրա դերը «աւարտված» չէ ըստ կառավարութեան լօգիկայի, այլ փոխված է:

Ինքնապաշտպանութիւն սեփական միջոցներով ու զէնքերով:

Իսկ դրանով սօցիալ դեմօկրատիան ցոյց կը տայ ցինիկ ու պրօվօկատօր կառավարութեան՝ մի կողմից, վրաց նացիօնալիստ մամուլին («Возрожденіе», «Իվերիա» և այլն)՝ միւս կողմից, հայ անտէրի կասկածամիտներին՝ երրորդ կողմից և Թաթար զազանացած ամբոխին՝ չորրորդ կողմից, որ ինքը այս կամ այն բուրժուական լիբերալ կուսակցութիւնը չէ, որի հետ կարելի լինի կօմեդիաներ խաղալ, այլ ինքը գիտակից պրօլետարիատի քաղաքագէտ ներկայացուցիչն է, որ այնքան ամուր ու անդրդվելի է իր սկզբունքների և չափած ձևած տակտիկայի մէջ:

Թող լաւ ըմբռնէ Թիֆլիսի պրօլետարիատը րօպէի ամբողջ խորհրդաւորութիւնը, զգայ նրա ծանրութիւնը: Քաղաքիս ստուար ազգաբնակութեան դէմ չարանիւթւում է վերին ծայրերից մի ահեղ կատաստրօֆ: Մութ ու խաւար էլեմէնտները՝ Թուրք Թէ խուլիգան, կօզակ Թէ ոստիկան,—այնքան յար ու նման իրանց վայրենի ու բարբարոսական հնատենչումներով,—ատամներ են կրճտեցնում կուլտուրական ու յեղափոխական էլեմէնտների դէմ:

Այդ բոլոր հակայեղափոխական ու մօնարխիստական ձգտումներին ու ձեռնարկներին ամեն տեղ և ամեն ժամանակ հակադրել է պրօլետարիատը իր համերաշխութեան միջազգային դէպը: Անդրկովկասի պրօլետարիատը՝ ընդհանրապէս և Թիֆլիսինը՝ մասնաւորապէս, պիտի առաջ վարէ անշեղ այդ իդէալական միսիան:

Ինքնապաշտպանութեան ուժեղ միջոցներով գիտակից ու կազմակերպված բանւորութիւնը ոչ միայն բաւարարութիւն կը տայ իր դաւանած դեմօկրատիական սկզբունքին—օգնելով և պաշտպանելով կոտորվող ու աւերվող անմեղ ազգաբնակութեան, և հարուածելով քաղաքականապէս շահագործվող ողորմելի ամբոխին, այլ և նա իր դասակարգային քաղաքական շահերից հարկադրված, պէտք է ճնշէ իւրաքանչիւր հակայեղափոխական ռեգրեսիւ տարր:

Սպասում ենք Թիֆլիսի պրօլետարիատի այդ հերոսական անձնուիրութեան:

Ց. Իշխանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դուշէթից մի յատուկ պատգամաւորութիւն, բաղկացած եօթ հոգուց, երեկ, նոյեմբերի 30-ին, ներկայացաւ փոխարքայի օգնական գեներալ Մալամային և յայտնեցին Դուշէթ քաղաքի ազգաբնակութեան խնդիրքը վերացնելու կօզակներին քաղաքից և տալու զէնք քաղաքացիներին ինքնապաշտպանութեան համար: Գեներալ Մալաման համաձայնվեց վերցնել կօզակներին, իսկ զէնք տալը գտաւ անհնարին, բայց Թոյլ տուեց կազմակերպել գիշերային ինքնապաշտպանական խմբեր:

—

Երէկ, ժամը 3½-ին մի հարբած կօզակ Ալէքսանդրեան այգու ներքին մասում խանչալը հանած ընկել էր անցորդների ետևից և հարուածում էր աջ ու ձախ. այդ հարուածներից մէկը իջաւ մի կնոջ մէջքին. մի այլ կօզակ ցանկացաւ զինաթափ անել այդ հարբածին, բայց նա էլ արժանացաւ հարուածի, և միայն երկար ծեծելուց յետոյ կարողացան խլել խանչալը հարբածի ձեռքից:

—

Երևանի նահանգապետը հեռագրում է, որ նոյեմբերի 27-ին, երեկոյեան 10 ժամին Նախիջևանում հրդեհվեցին Թուրքերի խանութները, որոնց մօտ սպանվեց Թուրք պահապանը: Դրանից յետոյ հայերի և Թուրքերի միջև սկսված հրացանաձգութեանը արագութեամբ վերջ դրին եկած զօրքերը, սակայն խանութների մի մասը այնուամենայնիւ այրվեց: Ձեռք են առնված բոլոր միջոցները անկարգութիւններ սկսվելու դէմ: Նահանգի մնացած մասերում Թէպէտև նկատվում է յուզմունք, մանաւանդ Երևանում, բայց անկարգութիւններ տեղի չունեն:

—

Ղազախի գաւառապետը հաղորդում է, որ նոյեմբերի 28-ին Դաղքեսաման և այլ գիւղերի Թուրքերը յարձակում գործեցին Ղազախի վրա: Գաւառապետը, ստրաժնիկների օգնութեամբ, քշեց բոլոր կողոպտիչներին, որոնք այնուամենայնիւ աջողեցրին մէկ տուն հրդեհել:

—

Ղազախի գաւառապետը գաւառի պաշտօնատար անձանց հետ միասին հեռագրում է, որ ցերեկվայ 12 ժամից տեղի ունի հրացանաձգութիւն: Ղազախն այրվում է: Տեղի ունեն սպանութիւններ և Աղստաֆայում կողոպտման են ենթարկվել մի քանի խանութներ:

—

Ելիսաւետպօլի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը զեկուցանում է, որ Զանգեզուրի գաւառի առաջին մասում տասը գիւղերի հայեր յարձակում գործեցին «Սլեման» Թուրք գիւղի վրա. գիւղի մի մասը կողոպուտի ենթարկվեց: Սպանված են և վիրաւորված 75 մարդ: Կօզակների հետ միասին վրա հասած պրիստաւը դադարեցրեց կողոպուտը:

—

Այսօր, դեկտեմբերի 1-ին, Թիֆլիսի Նախալօվկա Թաղում նշանակված է միտինգ ժամը 10-ին. հրաւիրվում են Թիֆլիսի բոլոր կարգի վաճառականները: Միտինգի նպատակն է քննել առևտրականների ներկայ վիճակը և վերջին կոտորածներին մի ելք գտնել:

—

Պեատիգօրսկ քաղաքից հեռագրում են, որ նոյեմբերի 23-ից մեծ յուզմունք է առաջացնում Սեմուլէգենցիների բռնումը, նոյնպէս և մազգոբների և ծառաների գործադուլը: Սունժէնեան բաժնում յաճախ են լինում կազակների ընդհարումները ինգուշների հետ: Չէչնիայում, նոյնպէս և Նազրան և Վլադիկավկազի շրջաններում աւազակախմբերը յարձակումներ են գործում:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՈՒՐՔԱՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՒՊԱՏՈՍԸ

Թիֆլիս քաղաքում, իր բարոյական պարտքն է համարում տէրրօրիստների լուրջ ուշադրութիւնը դարձնել, որ եթէ Կովկասում, և մանաւանդ Թիֆլիսում տեղի ունեցած ցաւալի դէպքերի ժամանակ Օսմանեան հպատակներից որ և է մէկը կը վնասվի, այդ հանգամանքը մեծ զգածմունք կառաջացնէ Թիւրքիայում, որի պատասխանատուութիւնը ամբողջապէս կընկնի մեղաւորների վրա:

Consulat, général de Turquie à Tiflis.

Բ Ժ Ի Շ Կ

Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայեա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 59—300

Բ Ժ Շ Կ Ո Ւ Հ Ի

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

Ա Չ Ք Ի Հ Ի Ւ Ա Ն Դ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8: (և.ռ.)25—100

Բ Ժ Շ Կ Ո Ւ Հ Ի

Բ. Նաւասարդեան

Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը: 27—100

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիսի, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկևիչեա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա.օ.) 23—100

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.